

ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը մասնակցել է ԵԱՏՄ երկրների միջազգային գիտական-հասարակական բնապահպանական խորհրդի հիմնադիր համաժողովին

Ս/թ. դեկտեմբերի 16-17-ը ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանի գլխավորությամբ, Մոսկվայում մասնակցել է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ-երկրների միջազգային գիտական-հասարակական բնապահպանական խորհրդի հիմնադիր համաժողովին: Համաժողովին մասնակցել են Բելառուսի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի գիտական, կրթական, հասարակական կառույցների ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ պատվիրակության կազմում էին ՀՀ ԳԱԱ Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ Գեորգի Ֆայվուշը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի փոխտնօրեն Գոռ Գևորգյանը:

ԵԱՏՄ անդամ-երկրների միջազգային գիտական-հասարակական բնապահպանական խորհուրդը նպատակ ունի ձևավորելու արդյունավետ մեխանիզմներ էկոլոգիական մարտահրավերների լուծման համար:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը նշեց. «Ժամանակակից հասարակության մեջ համակարգային բնապահպանական խնդիրների լուծումը հնարավոր չէ առանց մեր երկրների գիտնականների ջանքերի միավորման: Վստահ եմ՝ մեր



համագործակցությունը կդառնա գիտական առաջընթացի և բնապահպանական բարեկեցության հիմք: Միասին մենք կարող ենք պայմաններ ստեղծել կյանքի որակի բարելավման համար»:

Ակադեմիկոս Սադյանի առաջարկով նորաստեղծ խորհրդի նախագահ ընտրվեց Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ Ալեքսանդր Կիլչևսկին:

«Մեր խորհրդի նպատակն է կայուն գիտատեխնիկական հարթակի ձևավորումը, համատեղ նախաձեռնությունների մշակումը շրջակա միջավայրի պաշտպանության գործում, ինչպես նաև մեր երկրների միջև գիտական համագործակցության ամրապնդումը», - նշեց Ալեք-

սանդր Կիլչևսկին:

Աշոտ Սադյանը նշեց, որ ՀՀ ԳԱԱ համակարգի բնապահպանական ուղղվածության կառույցները ներգրավված են ԵԱ և ԵԱՏՄ գիտական ծրագրերում, որոնք նպատակաուղղված են բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը և նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համագործակցության զարգացմանը: Նա ներկայացրեց ՀՀ ԳԱԱ կառույցներում իրականացվող հետազոտությունները, անդրադարձավ ՌԴ գիտական կառույցների հետ համագործակցությանը:

Ակադեմիկոս Սադյանն անդրադարձավ ռազմական հակամարտությունների

բացասական ազդեցությանը էկոհամակարգերի վրա: «Հողերի տասնյակ հեկտարներ ոչնչանում են: Յուրաքանչյուր արկի պայթյուն բերում է հողի քիմիական կառուցվածքի փոփոխության: Սրա մասին են վկայում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները, որոնց անմիջական ակնհաստես են եղել նրա բնակիչները՝ իմ հայրենակիցները: Հողային ռեսուրսների արդյունավետ վերականգնման համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտացված գիտական հետազոտություններ՝ ուղղված աղտոտման հետևանքների վերացմանը: Լեռնային Ղարաբաղի գիտական կենտրոնում ՀՀ ԳԱԱ աջակցությամբ այս ոլորտում սկսվել էին գիտական հետազոտություններ, որոնք, ցավոք, կասեցվեցին հայտնի իրադարձությունների պատճառով: Քանի որ այլ տարածաշրջաններ ևս կարող են հայտնվել մամառիպ իրավիճակում, անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել նման ուսումնասիրություններին: Դա կպահանջի զգալի ժամանակ, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Հակառակ դեպքում հողի բնական վերականգնումը կարող է անշրջելի լինել», - ասաց Աշոտ Սադյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Տիգրան Մանսուրյան» գրքի շնորհանդեսը



Ս.թ. հունվարի 27-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանի «Տիգրան Մանսուրյան» մենագրության շնորհանդեսը: Գիրքը, որը նվիրված է Հայաստանի ժողովրդական արտիստ, անվանի կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի ծննդյան 85 ամյակին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը՝ Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:

Աշխատության խմբագիրն է արվեստագիտության դոկտոր Լևոն Հակոբյանը (Մոսկվա), գրախոսներն են արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանն ու արվեստագիտության

դոկտոր, պրոֆեսոր Միքե Նավոյանը:


Աշխատությունը Տիգրան Մանսուրյանի ստեղծագործական գործունեությանը նվիրված առաջին գիտական հետազոտությունն է, որտեղ հեղինակը քննության է առել կոմպոզիտորի բազմաժանր ստեղծագործությունը, նրա առնչությունները ժամանակակից համաշխարհային երաժշտությանը, համագործակցությունը մի շարք երևելի երաժիշտ-կատարողների հետ, ինչպես նաև՝ կոմպոզիտորի գեղագիտական հայացքները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը, շնորհավորելով Տիգրան Մանսուրյանին ծննդյան օրվա կապակցությամբ, նկատեց, որ թեև կոմպոզիտորն իր ծննդյան տարեդարձը նշում է այս էլ՝ 86-րդ անգամ և ստացել է բազմաթիվ թանկագին ու թանկարժեք նվերներ, սակայն այս տարեդարձը եզակի է առնվազն 2 պատճառով: Նախ՝ առա-

ջին անգամ մատուրն ծննդյան տարեդարձի առիթով շնորհավորանքներ է ընդունում հայոց գիտության կաճառում՝ ՀՀ ԳԱԱ այս հեղինակավոր գիտական դահլիճում: Աննախաղեպ է նաև նվերը, որը ստանում է Տիգրան Մանսուրյանն այսօր՝ իր կյանքին ու ստեղծագործական գործունեությանը նվիրված առաջին գիտական ուսումնասիրությունը: Ա. Ասատրյանը Տիգրան Մանսուրյանին նվիրեց մենագրության տպաքանակի 1-ին օրինակը, ինչպես նաև «Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում» պատկերագիրքը, որտեղ տեղ է գտել տաղանդավոր նկարչի կողմից 2012-ին վրձնած՝ Տիգրան Մանսուրյանի դիմանկարի վերատպությունը:

Ա. Ասատրյանը իր երախտագիտությունը հայտնեց Երևանի քաղաքապետարանին՝ մասնավորապես քաղաքապետ Տիգրան Ավինյանին և միջոցառմանը մասնակցող՝ Երևանի քաղաքապետարանի մշակույթի վարչության պետ Գոշ Սարգսյանին, ովքեր անմիջապես արձագանքեցին մենագրության ֆինանսավորման վերաբերյալ իր խնդրանքին և հույս հայտնեց, որ Տիգրան Մանսուրյանի աշխատության շնորհիվ սկիզբ առած համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Երևանի քաղաքապետարանի միջև կլինի շարունակական:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տե-



ղակալ Դանիել Դանիելյանը և Երևանի քաղաքապետարանի մշակույթի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

Այնուհետև մենագրության գրախոս՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքե Նավոյանը հանգամանորեն ներկայացրեց «Տիգրան Մանսուրյան» աշխատությունը:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկան գրքի հեղինակը՝ պրոֆեսոր Աննա Արևշատյանը և կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ



Հայ աստղագիտության նվիրյալներից է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էլմա Պարսամյանը, ով տասնամյակներ շարունակ իր անմնացորդ ավանդն է ներդրում Բյուրականի աստղադիտարանի համաշխարհային հեղինակությանն ու վարկանիշին: Բազմաթիվ գիտական արդյունքներ ու նվաճումներ, հարյուրավոր գիտական և գիտահանրամատչելի հոդվածներ, գրքեր, տասնյակ գիտաժողովներ, մեծաթիվ աշակերտներ, խմբագրական և վարչական-կազմակերպչական աշխատանք, հեռուստառադիո հաղորդումներ, հրապարակումներ մամուլում, լայնածավալ հասարակական գործունեություն. այս ամենը Էլմա Պարսամյանի գործունեության ոլորտների թվարկումն է միայն:

Էլմա Պարսամյանը մեծ ավանդ ունի Հայաստանում աստղաֆիզիկայի զարգացման և երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Լինելով ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի(ԲԱ) գիտաշխատող՝ ԲԱ հիմնադրման վաղ շրջանից նա աշխատել է մեծամուն աստղագետների, այդ թվում և Վ.Համբարձումյանի հետ:

Խոսելով Պարսամյանի գիտական ժառանգության մասին՝ առաջին հերթին պետք է նշել նրա աշխատանքները՝ ուղղված աստղերի և միգամածությունների ֆիզիկային, փոփոխական աստղերին և աստղային համակարգերի ուսումնասիրությանը, ինչպես նաև աստղաֆիզիկական կարևոր արդյունքների բերած մի շարք վիճակագրական աշխատանքները: Պարսամյանի անունով են կոչվում նրա կողմից հայտնաբերված գիսավորած միգամածությունները՝ Parsamian 1, Parsamian 2 և այլն (հատկապես հայտնի է Parsamian 21-ը): Սակայն չի կարելի չնշել նրա չափազանց կարևոր աշխատանքները Հայաստանի աստղագիտական ժառանգության վերհանման, ուսումնասիրության, պարզաբանման և տարածման բնագավառում: Մասնավորապես հայ հնագույն մտքի արգասիքներ Մեծամորի աստղագիտական հարթակն ու Ջորաջ քարերի հուշարձանը հանրությանը մատուցվեցին Պարսամյանի

Անվանի աստղագետը

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Էլմա Պարսամյանի ծննդյան 95-ամյակի առթիվ

նի աշխատանքների շնորհիվ: Հետագայում այդ հուշարձաններին անդրադարձան նաև մի շարք այլ հեղինակներ, ինչպես հնագետներ, այնպես էլ այլ մասնագետներ:

Էլմա Պարսամյանը ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 23-ին Երևանում: 1948 թ. ավարտել է Մայակովսկու անվան դպրոցը ոսկե մեդալով: 1949-1954 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի աստղագիտության բաժնում: Ավարտելուց հետո է. Պարսամյանը աշխատանքի ընդունվեց Բյուրականի աստղադիտարանում, որտեղ աշխատում է 70 տարի՝ տպագրելով մոտ 150 գիտական և մի քանի տասնյակ գիտահանրամատչելի հոդվածներ, որոնք վերաբերում են հիմնականում աստղաֆիզիկայի, ինչպես նաև հնագույն աստղագիտության տարբեր խնդիրների:

Գիտական գործունեության առաջին փուլում նրա հետաքրքրություններն ավելի շատ կապված էին գազային միգամածությունների, մասնավորապես գիսավորած և մոլորակած միգամածությունների և նրանց միջուկների, մանրակրկիտ ֆիզիկական հետազոտությունների հետ:

Աստղաֆիզիկայում կարևոր խնդիրներից մեկը տիեզերական մարմինների տարիքի որոշումն է: Պարսամյանին հաջողվել է էական ներդրում կատարել այս բնագավառում՝ մշակելով մի մեթոդ, որը թույլ է տալիս աստղասփյուռի կամ աստղակույտի տարիքը որոշել՝ օգտագործելով այդ համակարգերում առկա բռնկվող աստղերի բռնկումային ակտիվությունը: Ավելին, նոր բանած է ստացվել նաև Արեգակի շրջակայքի բռնկվող առանձին աստղերի տարիքը որոշելու համար: Այդ աշխատանքը բարձր գնահատական ստացավ Վ. Համբարձումյանի կողմից՝ որպես աստղակույտերի և աստղերի տարիքը գնահատելու այլընտրանքային մեթոդ:

Բռնկվող աստղերի հետազոտությունները 1983թ. հիմք դարձան Է. Պարսամյանի «Բռնկվող աստղերը աստղային ագրեգատներում» դոկտորական ատենախոսության համար:

Չմայած աստղաֆիզիկական հետազոտությունների բավականին մեծ քանակին և դրանցով զբաղվածությանը՝ Է. Պարսամյանը 1966 թ.-ից ի վեր բավականին կարևոր աշխատանքներ է կատարել նաև Հայաստանի տարածքում հնագույն աստղագիտական գիտելիքների մակարդակի վերհանման ուղղությամբ: Այդ աշխատանքներից առավել հայտնի են Մեծամորում դիտողական հարթակների հետազոտությունները: Մեծամորը իր տեսակի մեջ եզակի օբյեկտ է ոչ միայն հայ-

կական, այլև համաշխարհային հնաստղագիտության մեջ:

Պետք է հիշատակել նաև, որ նա առաջինն էր, ով դեռևս 1984 թ.-ից Ջորաջ քարեր մեզալիթային կառույցի հնարավոր աստղագիտական նշանակության վրա ուշադրություն հրավիրեց: Պարսամյանի կողմից այդ խնդիրն անդրադառնալը պետք է համարել մեզանում այդ կարևոր, հետաքրքրական և շատ բարդ խնդրի վրա ուշադրություն հրավիրելու անհրաժեշտ փորձ:

1989 թգ. Էլմա Պարսամյանը ստացել է պրոֆեսորի կոչում, իսկ 2000թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Էլմա Պարսամյանի գիտական գործունեությունը բարձր է գնահատվել գիտական հանրության և պետության կողմից, ինչն արտահայտվել է տարբեր պատվոգրերի, մեդալների, այդ թվում՝ «Անանիա Շիրակացի» մեդալի շնորհումով: Է. Պարսամյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների, որոնցից գրեթե բոլորում հանդես է եկել գիտական հաղորդումներով: Իր գիտական գործունեության ընթացքում աշխատել է Գերմանիայի, Մեքսիկայի, Հունգարիայի, Իտալիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի տարբեր գիտական կենտրոններում: Անդամակցում է Միջազգային աստղագիտական միությանը, Եվրոպական, Եվրասիական և Հայկական աստղագիտական ընկերություններին, երկար տարիներ անդամակցել է Բյուրականի աստղադիտարանի գիտական խորհրդին, ինչպես նաև աստղադիտարանին կից գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդին, որի նախագահն է եղել 2005-2016 թթ., «Աստղաֆիզիկա» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ է և այլն:

Բեղմնավոր գիտական աշխատանքի հետ համատեղ զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտում: Վերջինում զբաղեցրել է նաև «Տեսական ֆիզիկայի և աստղագիտության» ամբիոնի վարիչի պաշտոնը: 90-ականներին է. Պարսամյանն աշխատել և դասավանդել է Մեքսիկայի Աստղաֆիզիկայի, օպտիկայի և էլեկտրոնիկայի ազգային ինստիտուտում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը և Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի ողջ անձնակազմը շնորհավորում են պրոֆեսոր Պարսամյանի տարեդարձը և աշխատանքային գործունեության 70-ամյակը՝ մաղթելով քաջառողջություն, երկար տարիներ և կյանք և ստեղծագործական հաջողություններ:

Երիտասարդ գիտնականի ամբիոն. Ավետիս Գրիգորյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ավետիս Գրիգորյանը «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր» շրջանակներում իրականացվող «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթի» 2024 թվականի շահառուներից է:

Նա առաջին անգամ տարվա ընթացքում իրականացնելու է «Հիշողության բեկումնը հայ-ադրբեջանական սահմանին. պատմամշակութային հուշարձաններին առնչվող բանահյուսական շերտերը և տրանսֆորմացիաները Սևանա լճի արևելյան ավազանում և լեռնաշղթաներից անդին» թեմայով հետազոտություն: Աշխատանքներին մասնակցելու է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, բանագետ Փևրոզ Գյուլումյանը:


«Հետազոտության շրջանակում կփորձենք ցույց տալ հնագիտական և պատմամշակութային հուշարձաններին առնչվող բանահյուսական շերտերի և ազգագրական երևույթների տեղաշարժերը հայ-ադրբեջանական սահմանին և հիշողության բեկումնը տարածության ու ժամանակի մեջ: Համեմատական քննության կենթարկվեն Սևանա լճի արևելյան ավազանի և լեռնաշղթաներից արևելք՝ ադրբեջանական կողմում գտնվող պատմական հուշարձանների շուրջ ձևավորված, Արևմտյան Հայաստանից ու Խորհրդային Ադրբեջանից բերված բանահյուսական նյութը, դրանց հիման վրա տեղում ստեղծված նորը», - ասաց Ավետիս Գրիգորյանը:

Դաշտային ազգագրական և հնագիտական հետախուզական աշխատանքները նախատեսվում են իրականացնել Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում: Ակնկալվում է ստեղծել Գեղարքունիքի մար-

զի սահմանամերձ շրջանների պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ ժողովրդական բանահյուսությանը, բանավոր պատմություններին և ազգագրական երևույթներին վերաբերող տվյալների բանկ, որում կառուցվածքներն Արևմտյան Հայաստանից և Գարդմանից եկած շերտերը և վերջին տասնամյակներում դրանց միախառնման արդյունքում ստեղծված ժամանակակից բանահյուսությունը: Նաև նախատեսվում է ներկայացնել վերջին երկու հարյուրամյակում Սևանա լճի արևելյան ավազանում և լեռնաշղթաներից անդին ադրբեջանցիների վերաբերմունքի ընդհանուր գծերը և փոփոխությունների դինամիկան հայկական նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ:

Ավետիս Գրիգորյանը երեք տասնյակ գիտական հրապարակումների հեղինակ է, մասնագիտական ուղղվածությունը միջնադարյան և նոր շրջանի Հայաստանի հնագիտության և պատմության խնդիրներն են: Նա առանձնացնում է «Օպերացիա Ջորաջ» գիրքը, որը հեղինակել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Արսեն Բոբոխյանի հետ: Գրքում ներկայացված է, թե ինչպես Հայաստանը 1919 թվականին պահեց Սոթի բնագիծը: Իրականացնելով հնագիտական պեղումներ Գեղարքունիքի մարզում՝ հեղինակներն առաջին անգամ և նոր փաստական տվյալների հիման վրա ներկայացնում են Սևանա լճի տարածաշրջանում հայ-թաթարական բախումների պատճառները, ժամանակագրությունը, հետևանքները:

Ավետիս Գրիգորյանը ներկայում իրականացնում է բազային և դրամաշնորհային մի քանի ծրագրեր, որոնց շրջանակում ուսումնասիրում է պատմական Սյունիքի հուշարձանները, մասնավորապես Սևանա լճի ավազա-



նի միջնադարյան հուշարձանները, Հայաստանի ջրածածկ (ըստ արիսիվային փաստաթղթերի) և ջրամերձ հուշարձանները, շարունակում է Վայոց ձորի մարզում գտնվող իշխան Չեսար Օրբելյանի պալատի և Սյունիքի մարզում գտնվող միջնադարյան Բաղաբերդ ամրոցի հնագիտական ուսումնասիրությունները:

Ըստ նրա՝ հնագիտության ոլորտում երիտասարդ գիտնականին մրցակցային առավելություններ կարող են տալ ժամանակակից սարքավորումներին տիրապետելու հմտությունները և տարբեր լեզուների իմացությունը: Իսկ մասնագիտական աճին կարող են նպաստել երիտասարդ գիտնականների համար նախատեսված ծրագրերը: «Նմանատիպ ծրագրերն ունեն ոգևորիչ նշանակություն: Դրանք հնարավորություն են տալիս սկսնակ հետազոտողներին ներկայացնելու համարձակ գաղափարներ և ֆինանսական աջակցություն ստանալու՝ դրանք կյանքի կոչելու համար: Միաժամանակ այսպիսի ծրագրերը երիտասարդ գիտնականների համար օգտակար փորձառություն են՝ ավելի մեծ ծրագրերի մասնակցելու համար», - նշեց Ավետիս Գրիգորյանը:

Սոնիկա ԵՐԻՑՅԱՆ

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԲԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ

Խմբագրության կողմից

Հայ պատմագիտական մտքի կենտրոնը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, տասնամյակներ շարունակ, հիրավի, եղել և մնում է այդ առաջնագծում: Մենք առիթ ենք ունեցել այդ մասին բարձրաձայնելու «Գիտություն» թերթի՝ 2023 թ. 7-րդ համարում: Դեռևս այն ժամանակ ցավով փաստել էինք, որ պատմագիտությունից հեռու կանգնած և պատմությունից այդպես էլ դասեր չքաղած որոշ անհեռատես քաղաքական գործիչներ ոչ ավել, ոչ պակաս սկսել էին պատմության

դասեր տալ մեր պատմաբաններին: Ամեն կերպ սովորելով մեր պատմական հիշողությունը՝ նրանք անընդմեջ օրակարգ էին ներմուծում չինժու եզրույթներ և արհեստածին թեզեր, որոնց միջոցով նպատակադրված և համառորեն առաջ էին տանում պատմական դեպքերի և դեմքերի վերաբերմունքներ և ընդհանրապես հայոց բազմադարյան պատմության «վերախմբագրման» ապագային գաղափարներ:

Հայոց ինքնության և պատմական արժեքների պահպանման դեմ արշավել այսօր ավելի մեծ թափ է ստա-

ցել: «Իրական» Հայաստանի ջատագովների համար խորթ են պատմական Հայրենիք, ցեղասպանություն, հայրենագրվում, պահանջատիրություն եզրույթները: Նրանց համար Արևմտյան Հայաստանը Արմավիրի և Արագածոտնի մարզերն են, իսկ Արևելյան Հայաստանը՝ Տավուշը, Գեղարքունիքը... Նրանց համար չկան պատմական հերոսներ, հերոսը հարկ վճարողն է և այլ անմիտ ու արքայազնի «մտքեր»: Իսկ եթե չես կիսում նման «գաղափարները»... Այդ դեպքում մարտնչող տգիտության շոշափուկները կհասնեն թեզ:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում «Հրապարակ» օրաթերթի լրագրող Մ. Ղահրամանյանի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանի հարցազրույցից որոշ հատվածներ («Հիմա էլ ԳԱԱ պատմության ինստիտուտն է հայտնվել թիրախում», «Հրապարակ», 17 հունվարի, 2025 թ.):



«Հրապարակ»-ի տեղեկություններով իշխանությունները մտադիր են կրճատել ԳԱԱ պատմության ինստիտուտի ֆինանսավորումը, ինչն անհանգստություն ու մտահոգություններ է առաջացրել:

Ինստիտուտի՝ շուրջ 20 տոկոսով ֆինանսավորման կրճատումն անխուսափելիորեն հանգեցնելու է կրճատումների, ինչն էական հարված է լինելու ինստիտուտի համար: «Հրապարակ»-ի հետ զրույցում Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ըստ էության, չհերքեց մեր տեղեկությունը՝ նշելով, թե խնդիրը դեռ փակված չէ, քննարկումը շարունակվում է, դեռ վերջնական որոշում չկա:

«Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ հիմա աշխատում ենք, փորձում ենք հասկանալ, թե այդ կրճատման կամ ֆինանսի իջեցման պատճառը որն է: Միջգերատեսչական հանձնաժողով

է եղել, որը որոշում է կայացրել՝ ըստ վարկանիշների, թե ինչ... Ինչպես հասկանում ենք, ամեն ինչ դեռ հստակ չէ, հենց այս պահին զբաղված ենք դրանով: Մենք գրությունը ստացել ենք Նոր տարվա նախաշեմին», - մեզ հետ զրույցում ասաց Աշոտ Մելքոնյանը:

Նրա խոսքով ինստիտուտի ֆինանսավորման կրճատումը լուրջ բացասական հետևանքներ կարող է ունենալ ինստիտուտի գիտական ներուժի վրա: Ակնկալում են, որ հարցը դեռ հնարավոր է լուծել: «Սա կարևոր խնդիր է, երկրի համար մենք գիտական և գաղափարական հաստատություն ենք, պետք է փորձենք մեր գիտական ներուժը պահպանել: Հայագիտական և հումանիտար ինստիտուտների մեջ մենք առաջինն ենք 1943 թվականից՝ Ակադեմիայի հիմնադրման օրվանից, ամեն ինչ անելու ենք, որ ֆինանսավորումը վերականգնվի: Կա նաև համառոտագրության խնդիր, եթե նախկինում այդ մասով մոտեցումները խիստ չեն եղել, հիմա ավելի խիստ են, որովհետև աշխատանքային օրենսդրությամբ պետք է մարդիկ առավելագույնը 1,5 դրույք աշխատեն, և այդ դեպքում մենք ստիպված ենք լինում կրճատել դրույքաչափը», - բացատրեց Աշոտ Մելքոնյանը:

Հաշվի առնելով այն քաղաքականությունը, որը վարում է գործող իշխանությունը ազգային ինստիտուտների նկատմամբ, այսպես կոչված, «իրական ու պատմական» Հայաստանների պայքարը, արդյոք պատահականա՞ն է ֆինանսավորման կրճատման խնդիրը: Աշոտ Մելքոնյանն ա-

սաց՝ իրենց գիտական մոտեցումը հստակ է, իսկ ենթատեքստի հարցը պետք է հասցեագրել այն մարդկանց, ովքեր ունեն նման մոտեցումներ Հայոց պատմության վերաբերյալ:

«Մենք՝ որպես գիտնականներ, մեր դիրքորոշումն ունենք, պարզ չէ՞, որ Արևմտյան Հայաստան և «Արևմտյան Ադրբեջան» հասկացությունները նույն հարթության վրա չի կարելի դնել, որովհետև մի դեպքում կեղծիքի, մյուս դեպքում իրական պատմության մասին է խոսքը: Նույնը կարող ենք ասել Հայոց պատմության ու Հայաստանի պատմության հետ կապված. այստեղ ուղղակի զրաբարի խնդիր կա, և Հայոց պատմությունը նշանակում է Հայքերի պատմություն՝ երկու Հայաստանների պատմություն: Գիտական տեսանկյունից մենք մեր ասելիքն ասում ենք, իսկ եթե քաղաքական ենթատեքստ կա, այդ մասին հարցը պետք է ուղղվի այն մարդկանց, որոնք նման մոտեցում ունեն», - շեշտեց Պատմության ինստիտուտի տնօրենը:

Աշոտ Մելքոնյանը զգուշավոր փորձում էր իշխանության վարած քաղաքականության վերաբերյալ զննահատականներից խուսափել՝ մնալ գիտական կարծիքի շրջանակներում, հավանաբար մտավախություն ունենալով, որ ինստիտուտի համար այս բարդ փուլում կտրուկ զննահատականները կարող են վատ անդրադառնալ գործընթացի վրա: Նա շեշտեց՝ գիտականության տեսանկյունից նախաձեռն չի լինելու, քանի դեռ ինքը ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենն է, իսկ քաղաքա-

կան կոնյունկտուրան չի կարող ազդել գիտության անաչառության վրա:

«Բոլոր իշխանությունների ժամանակ մենք մեր ասելիքն ասել ենք, օրինակ, Ռոբերտ Քոչարյանի ժամանակ հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի հետ կապված մեր կարծիքը հայտնել ենք, որ չի կարող լինել հաշտության հանձնաժողով ոճրագործի և զոհի միջև, կամ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման շրջանում Յուրիխյան արձանագրությունների կապակցությամբ հայտնել ենք մեր կարծիքը», - նշեց նա:

Խնդրեցինք նույն՝ գիտականության տեսանկյունից մեկնաբանել գործող իշխանությունների այսպես կոչված խաղաղության օրակարգն Ադրբեջանի կամ Թուրքիայի հետ հաշտեցման հարցը: «Դա քաղաքական հարց է, ինստիտուտի խնդիրը չէ: Այսօրվա Ադրբեջանի ռազմական հռետորաբանության պարագայում ակնկալել խաղաղության պայմանագիրը նշանակում է լինել միամիտ: Չի երևում, որ Ադրբեջանն ամեն ինչ անում է՝ վիժեցնելու համար այդ պայմանագիրը: Թուրքիան և Ադրբեջանը չեն փոխվել: Որպես գիտնական՝ այդ մոտեցումը հստակ կարող եմ ասել՝ շատ անհավանական է, որ հավասարը հավասարի կեցվածքով որևէ համաձայնագիր կնքվի», - իր կարծիքը հայտնեց Աշոտ Մելքոնյանը: Իսկ որպես գիտական հիմնարկի ղեկավար՝ նշեց՝ պարտավոր է ինստիտուտի աշխատակիցների իրավունքների պաշտպանության դիրքերում կանգնել, եթե խնդիրը քննարկումների արդյունքում չլուծվի:

Իրավիճակ և անելիք

Տարեսկզբին Ալիևի արած հայտարարությունները վերջակետ դրեցին նախորդ տարիների պատրանքներին, որ հնարավոր է կայուն, արժանապատիվ և փոխշահավետ խաղաղության հասնել Ադրբեջանի հետ, ինչպես նաև ստիպեցին Հայաստանի գործող իշխանությանը խոստովանել, որ Բաքուն հող է նախապատրաստում նոր ագրեսիայի համար:

Հարևան երկրի ղեկավարի տարեմուտի ասուլիսը կրկին խաթարեց մեր թվացյալ անդորրը՝ խորացնելով վերահաս արհավիրքի տագնապը: Մինչդեռ տեղի ունեցածը հերթական հաստատումն էր այն բանի, որ արտաքին դերակատարներն ու գործընկերներն են ձևավորում մեր ներքին և արտաքին օրակարգը: Հետևաբար մերկայիս պայմաններում որակապես այլ բովանդակություն ունեցող արտաքին քաղաքականության հրատապ ձևավորումը պետք է դառնա Հայաստանի քաղաքական ու հասարակական դերակատարների առաջնային և գերկարևոր խնդիր: Պետք է արձանագրել մեկընդմիջ, որ ստեղծված բարդագույն պայմաններում ոսկերչական ճշգրտության դիվանագիտությունն է մեր պետականության և նրա տարածքային ամբողջականության անձեռնմխելիության պաշտպանության հիմնական բնագիծն ու երաշխիքը:

Փոխարենը մենք վտանգավոր միտումների շարունակական կենսագործման ակամատեսն ենք դառնում: Մի կողմից՝ «խաղաղության դարաշրջանի» քաղաքականության փաստացի տապալման արձա-

նագրմանն անմիջապես հետևեց «լուսավոր ապագայի» մասին մեր նախաձեռնություն: ՀՀ կառավարությունը իր վերջին նիստին հավանություն տվեց Եվրամիությանը Հայաստանի անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագծին, որն առաջիկայում կներկայացվի Ազգային ժողովի հաստատմանը: Ինչպես նախկինում խաղաղության անհիմն օրակարգը, այնպես էլ այսօր ԵՄ-ին անդամակցելու անհեռաձև շրջադարձը, իմ գնահատմամբ, շեղելու են մեր բնակչության ուշադրությունը՝ եվրոպական անհասանելի քաղցրաբլիթներով բթացնելով մեր զգուշությունն օրհասական վտանգներից և տապալումներից: Ձուգահեռաբար հարևան երկիրն օգտագործում է յուրաքանչյուր առիթ՝ ներագդելու հայաստանյան քաղաքական մթնոլորտի վրա, և Բաքվում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության այսպես կոչված դատավարության բեմադրությունը Հայաստանում քառս ու բաժանարար մոր գծեր առաջացնելու նպատակ ունի, ինչն առավել կոյուրացնի իր հեռահար նպատակների իրագործումը:

Ընտրության տարբերակները քիչ են: Ժամանակը սպասվում է: Պետք է այս կործանարար ընթացքին վերջ դնել: Տասնամյակների փորձը ցույց է տվել, որ պատերազմներում հաճախ ռազմական առումով առավել հզոր հակառակորդի դեմ օգտագործված ասիմետրիկ ռազմավարությունը տալիս է իր դրական արդյունքները: Իրոք, այսօր Հայաստանն էլ չի կարող դիմակայել Ադրբեջանի և նրա թիկունքում

գործող ուժեղ հովանավորների ռազմական հզորությամբ: Բայց Հայաստանը դեռևս կարող է ասիմետրիկ և ոչ կոնվենցիոնալ դիվանագիտության միջոցով կանխել հակառակորդի ռազմական մոր ագրեսիան և ապա զսպել նրա ռազմավարական ծրագրերի կենսագործումը: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ արտաքին քաղաքականությունը հաճախ ենթադրում է որոշում կայացնել անկատար տարբերակների միջև: Մեր պարագայում հասարակությունը պետք է գիտակցի, որ ընտրության տարբերակները, լինելով խիստ սահմանափակ և դժվարագույն, կարող են դառնալ Հայաստանի թերևս միակ փրկուղին ընթացող տարածաշրջանային վտանգավոր վերափոխումների պայմաններում:

Որևէ երկիր չի կարող լուրջ արտաքին քաղաքականություն վարել, եթե նրա ներսում պառակտվածությունը հասել է այսպիսի բևեռացման: Երբ ներքին ընդդիմախոսների նկատմամբ հաղթանակը դառնում է արտաքին քաղաքականության առաջնային նպատակը, համախմբվածությունը հոգս է ցնդում: Առավել, քան երբևէ մեզ պետք է ներքին կոնսենսուսի ձևավորում արտաքին քաղաքականության բովանդակության և իրագործման վերաբերյալ: Հարցազրույցների, հողվածքների և հայտարարությունների ազդեցությունը որքան էլ առողջարար, բայց խիստ սահմանափակ է: Առաջարկում են այլընտրանքային տեսական և վերլուծական քննարկումների զուգահեռ անհապաղ ձևավորել քաղաքական և հասարակական կազմակերպությունների խորհրդատվությունների մեխանիզմ՝ ներքաղաքական կոնսենսուսի ձևավորման նպատակով:



Արտաքին մարտահրավերները հասցեագրելու միասնական հարթակը մեր ներքին համախմբման համար պահանջված քայլ կլինի, ինչպես նաև լուրջ ազդանշան արտաքին դերակատարներին հատվածական և առանձին ուժերի միջոցով իրենց մարտավարական նպատակները կյանքի կոչելու անհեռաձևության և միասնական դիրքորոշման հետ հաշվի նստելու անհրաժեշտության մասին: Դիվանագետների համահայկական խորհուրդը, լինելով մասնագիտական կազմակերպություն, ի թիվս այլ կայացած միավորների, պատրաստ է իր նպաստը բերելու այս առաքելության իրականացման համար: Մեր Հայրենիքը կարիք ունի վերջակետ դնելու մեր պատմության այս ամոթալի ընթացքին և մոր սկիզբ դնելու՝ հանուն մեր ընդհանուր և արժանապատիվ ապագայի:

Արա ԱՅՎԱԶՅԱՆ
Դիվանագետների համահայկական
խորհրդի հիմնադիր անդամ
(«Փաստիք»)

«ԻՆՉՈՒՒ ԿԸ ՄԻՐԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ...»

Հայոց ցեղասպանության իրագործումից հետո դառն ու ողբերգական մթնոլորտը պատել էր հայության ողջ մնացած հատվածներին: Ընդհանուր հուսահատական տրամադրությունները գերիշխող էին ամենուրեք: Դժնդակ, անագորույն իրականությունը հույսի կամ խանդավառության որևէ նշույլ չէր արձակում: Երկրի և ժողովրդի մեծագույն մասը մատնվել էր կորստյան: Եղեռնից մազապուրծ հայրուր հազարավոր մարդիկ՝ զրկված ամեն ինչից, որը ու անտեր դեգերում էին Արևելյան Հայաստանի զանազան վայրերում, Թիֆլիսում, Ռուսաստանի հայաշատ բնակավայրերում:

Այս հուսահատական և սպանիչ տրամադրություններին ընդդեմ՝ Ջորափար Անդրանիկն իր օգնականի՝ երիտասարդ, տաղանդավոր գրող Վահան Թոթովենցիի և Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննես Թումանյանի զորակցությամբ նախաձեռնեց նոր պարբերականի՝ «Հայաստան» օրաթերթի հիմնադրումն ու հրատարակությունը:

Օրաթերթը սկսեց իր գործունեությունը 1917 թվականի ապրիլից: Այն դարձավ սպասված, կարևոր և ազդեցիկ պարբերականը, որի էջերից խոսեց ողջ հայ ժողովուրդը՝ հանձնիս նրա լավագույն ներկայացուցիչների: Հայ ազգային կյանքի բոլոր կարևոր դեպքերն ու իրողություններն անդրադարձ էին գտնում օրաթերթի էջերում՝ անհրաժեշտ վերաբերմունքի դրսևորումներով: Հատկապես դա վերաբերում էր կորստյան մատնված Արևմտյան Հայաստանի և արևմտահայ

յության ճակատագրին առնչվող զարգացումներին: Ձարկված երկրին նվիրված խոսք ու ներբողներ էին հնչում թերթի բազմաթիվ համարներում:

Այսպես, 1917 թ. օգոստոսի 22-ին թերթի առաջին էջում հրապարակված էր ֆրանսիացի տաղանդավոր բանաստեղծ, բարձր մտավորական Էմիլ Փիմետյի «Ինչո՞ւ կը սիրեմ Հայաստանը» վերնագրով գեղեցիկ ու հուզախոռվ ակնարկը, որում արտացոլված էր մարտիրոսագրված հայ ժողովրդի հոգու վեհությունը: Սույն հոդվածն առաջին անգամ հրապարակվել էր «Վերածնունդ» հանդեսում՝ ֆրանսերեն լեզվով: «Հայաստանը» այն առաջին անգամ ներկայացնում էր հայալեզու ընթերցողին՝ հայերեն թարգմանությամբ: Մինչ այդ հրապարակվել էր Էմ. Փիմետյի բանաստեղծություններից մեկը՝ «Հայաստան» օրաթերթում՝ Արշակ Զոպանյանի թարգմանությամբ:

Ֆրանսիացի բանաստեղծի հոգվածը պաթոսային հզոր ուժով գերում և լիցքավորում է ընթերցողների հոգին: Նա գնահատում և իմաստավորում է Հայաստան երկրի և հայ ժողովրդի տեղը ու դերը համաշխարհային բաղադրական գործընթացում՝ որպես ազատության, խիզախության և մարդկային արժանապատվության խորհրդանիշ: Ահա նրա խորունկ բանաձևումը. «Ինչո՞ւ կը սիրեմ Հայաստանը: Մէկ խոսքով, որովհետև ան պահանջումն է ազատութեան՝ մարդկային արժանապատվեան ձևերէն մէկը:

Հայուհիներ և հայեր, դուք կանգնեցաք հպարտօրէն և զայրացկոտ Ձեր անբռնաբարելի հոգւոյն թափին մեջ: Դուք հասաք այն վսեմ կատարի բարձրութեան, որ կը կոչուի «Անքակտելի յարուն գաղափարի մը»:

Ֆրանսիայի ազնվագույն զավակը հոգեղենության և բարոյականության բարձրագույն չափանիշներով կրկին ու կրկին հիմնավորում է, թե ինչու է սիրում Հայաստանը. «Ինչ որ ես կը տեսնեմ Ձեր իւրաքանչիւրի շուրջը, իւրաքանչիւրի մէջ, ամբողջ ժողովուրդ մըն է, վիրաւոր ծանրագոյն շղթաներով, արիւնլուայ ամենէն ծանր լուծերու տակ, եռանդագին, հոգեպէս, յարատեւօրէն կանգնած միշտ, բոլոր տառապանքներուն, բոլոր բռնութիւններուն, բոլոր խորամանկութեանց, բոլոր տմարդութեանց հանդէպ, բոլոր գողգոթաներու վրայ... բազմապատկուած իրեն համար աշխարհին ցույց տալով իր հոգւոյն անպարտելի հաւատքը իր վերածնունդի ժամուն համար»:

Օտարազգի սույն վեհանձն մտավորականը լիովին և լիասիրտ ըմբռնում է հայ ժողովրդի պատմական ճակատագրի ողջ դրամատիկ ընթացքն ու իր հիացմունքն է արտահայտում հայության քաջարի պահվածքի հանդեպ. «Ահա ինչո՞ւ համար, պզտիկ մարտիրոս ժողովուրդ, մեծ մարտիրոսագրութեամբ, դու՛ն կը մնաս ամբողջ Մարդկութեան համար կենդանի օրինակ մը դիմացկունութեան և լոյսի, բոլոր գերեզմաններուն վրայ, ճառագայթող ազատութեան, բոլոր բռնակալութիւններուն

վրայ... Ով Դուք, որ աւելի հզոր եղաք, քան տառապանքը, և մահը, որովհետև Դուք մարդկային ազատութեան թևերուն հովանաւորութեան ներքև կը մնաք»:

Ահա այսպես «Հայաստան» պարբերականը ոգևորում էր եղեռնից մազապուրծ իր հայրենակիցներին, նրանց վերստին տոգորում տունուտեղ, հայրենիք ունենալու գիտակցությամբ:


Ահա ամենից կարևորը հենց այդ շունչն էր և ոգին, որ պարբերականը փոխանցում էր իր բազմահազար հետևորդներին: Այդ մասին սպառնիչ պատկերացում էր տալիս «Սո՛ւրբ Հայաստան» վերնագրով հուզումնալից ակնարկը, որը պատկանում է Թոթովենցի գրչին. «Բանաստեղծութիւնը, արդարև, չի գօրեր սովեալին հաց և անտունիին երդիկ մը տալու: Բայց այն աւելին կուտայ: Այն կուտայ սիրտ՝ մեծագոյն ցաւերուն տոկալու, ան կուտայ հոգի՝ աւերակը նորէն պարտեզի փոխելու և մեռած կարծուած ազգը արևուն տակ ոտքի հանելու: Ազգի մը բուն մահը կը սկսի՝ երբ ինք իր վրայ հաւատքը մեռնի իր մէջ» («Հայաստան», 1917թ., թիվ 99):

«Հայաստան» օրաթերթի խմբագիր, երիտասարդ տաղանդավոր արձակագիր և բանաստեղծ Վահան Թոթովենցը փայլուն կատարեց իր առջև դրված խնդիրները. թերթը խոսեց ժողովրդի հոգու և մտքի թրթռումն ելևէջներով, խոսեց արևմտահայության՝ նրա կենդանի և անհատակ հատվածների անունից:

Արմեն ԿԱՐԱԴԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների
թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Լույս է տեսել «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուն



Արհեստական բանականության զարգացման արագությունը և նրա ներդրումը տնտեսության բոլոր ոլորտներում առաջացնում են ոչ միայն սոցիալական թվային գիտակցության, տեխնոլոգիական, այլև սոցիալ-տնտեսական և աշխարհաբաղադրական լայնածավալ փոփոխություններ: Մարդկությունն առաջին անգամ բախվում է իր կողմից ստեղծված տեխնոլոգիական նորարարության անհավասար մրցակցությանը: Բարձր տեխնոլոգիաների զարգացումը պահանջում է տնտեսության բոլոր ոլորտների և գիտություն համագործակցություն:


Դրան էր նպատակաուղղված 2024 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՀ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի, Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի և ՌԴ գիտությունների ակադեմիայի Սարատովի գիտական կենտրոնի կողմից կազմակերպվեց միջազգային գիտաժողով: Գիտաժողովում ներկայացված թվային գործակալների և տնտեսական նոր մարտահրավերների առօրյա դարձած բովանդակային

խնդիրները գիտական վերլուծությամբ ամփոփված են «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուն:

Գրքում տեղ են գտել արժեքավոր ուսումնասիրություններ արհեստական բանականության ներդրման պայմանավորված տնտեսական զարգացման որակական փոփոխությունների, մակրոտնտեսական ցուցանիշների շարժի, աշխատանքի շուկայի նոր կառուցվածքի, ֆինանսական վերահսկողության նոր գործիքակազմի, իրավապահ պրակտիկայում ձևավորվող առանձնահատկությունների, բնապահպանական նոր մոտեցումների մասին: Հեղինակների լայն աշխարհագրությունը հարստացրել է հոդվածներում մշակված մոդելների, կիրառական գործիքների և մեթոդների գիմանոցը:

Մասնակից գիտական կենտրոնների տնտեսագետների վերլուծություններում ֆիզիկական աշխարհի և թվային տարածությունների սահմանները հատվում են սպասարկման ոլորտի զարգացման նոր վեկտորների կառուցմամբ, առողջապահության թվայնացման մոդելներում, նավթաքիմիական արդյունաբերության և էներգաարդյունավետության այլընտրանքային միտումներում, ներկայացված են նաև եվրոպական երկրների փորձը և արհեստական բանականության ոլորտի զարգացումը ԱՊՀ երկրների շրջանակներում: Հետազոտություններում ուսումնասիրությունների լայն ընդգրկվածությունը բարձրացնում է ժողովածուի կիրառական նշանակությունը, և այն կարող է դասվել միջազգային գիտական ժողովածուների շարքում:

ՀՀ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ



13-րդ դարի հայկական ճարտարապետության «գոհարն ու շտեմարանն» է Գանձասարի հռչակավոր վանական համալիրը: Ինչպես փոխանցում է «Գեղարդ» հիմնադրամը, վանքն առաջին անգամ հիշատակվում է 10-րդ դարի կեսերին հայոց կաթողիկոս Անանիա Սոկացու կողմից: 1216-1238 թվականներին Խաչենի գահերեց մեծ իշխան Հասան Ջալալ-Դուլան կառուցել է Գանձասարի Սուրբ Դավիթանյան Սկրտիչ եկեղեցին՝ նրա հյուսիսային պատին թողնելով 27 տողից բաղկացած վիմագիր արձանագրություն: 14-րդ դարի վերջերից մինչև 1815 թ. վանքը եղել է Գանձասարի կաթողիկոսության աթոռանիստը, ունեցել է հարուստ ձեռագրատուն, դպրանոց: 18-րդ դարի սկզբին հանդիսացել է Արցախի ազատագրական շարժման կենտրոն: Վանքի պատերին կա շուրջ 200 հայերեն արձանագրություն:

2023 թվականի սեպտեմբերին՝ Արցախի ամբողջական բռնազավթումից և հայաթափումից հետո, Գանձասարի վանքն օկուպացվել է Ադրբեյջանի կողմից:

Անհնար է պատկերացնել, թե ինչպես կարող էր Գանձասարի հայկական վանական համալիրը համարվել «աղվանական եկեղեցական ճարտարապետության մարգարիտ», երբ 13-րդ դարում Արցախում և ընդհանրապես տարածաշրջանում աղվանական բնակչություն չի եղել:

«Հրապարակ», 21 հունվարի, 2025 թ.:



ԼՆՎԱՆԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՄՈՒՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԶԸ

(Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

2024 թվականի դեկտեմբերի 26-ին լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին տնօրեն (1987-2003), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Հովհաննեսի Հախվերդյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը:

Լ. Հախվերդյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 26-ին Վանաձորում՝ զինվորականի ընտանիքում: Չորս տարի անց Հախվերդյանների ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1941-ին Լ. Հախվերդյանը ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1949-ին՝ Երևանի թատերական ինստիտուտի թատերագիտության բաժինը:

Լ. Հախվերդյանի կյանքը ծավալվեց մի քանի՝ իրար սերտ շաղկապված, բայց միևնույն ժամանակ ինքնուրույն բնագավառներում, որոնցից յուրաքանչյուրում նա թողեց անշնչելի հետք: Դրանք էին՝ թատերագիտությունն իր բոլոր դրսևորումներով՝ ներառյալ թատերական քննադատությունը, գրականագիտությունը՝ մասնավորապես թունամյանագիտությունը, լեզվաբանությունը, մանկավարժությունը (1980-ից դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում): Եվ, իհարկե, գիտության կազմակերպումը:

Ինստիտուտում ավարտելուց անմիջապես հետո՝ 1949-1953 թթ., Լ. Հախվերդյանը ղեկավարել է «Գրական թերթի» քննադատության բաժինը, 1953-1955-ին եղել է Հայպետհրատի խմբագիրը, իսկ 1955-1959-ին՝ «Սովետական արվեստ» հանդեսի պատասխանատու քարտուղարը:

1950-ին նա դարձել է Հայաստանի գրողների միության անդամ (հետագայում՝ Վարչության անդամ), իսկ 1951-ին՝ Հայաստանի թատերական ընկերության անդամ:

Բազմաշնորհ ու խոստումնալից երիտասարդի համար բախտորոշ դարձավ 1956 թվականը. «Մեր օրերի հայ դրամատուրգիան» աշխատության համար նրան շնորհվեց բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, և ճակատագիրը նրան բերեց Հայաստանի ԳԱ արվեստների տեսության ու պատմության սեկտոր՝ որպես գիտական աշխատակից: Այդ օրվանից նրա գի-

տաստեղծագործական ու գիտական կերպական կյանքն ամիգելիորեն կապվեց հայոց գիտության կաճառի և Արվեստի ինստիտուտի, ասել է թե՛ հայ արվեստագիտության հետ, որին նա ծառայեց անմնացորդ նվիրումով: Միևնույն ժամանակ երբեք «չդավաճանեց» թունամյանագիտությանը:

1965-ին Հախվերդյանը ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, 1967-ին պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Թունամյանի աշխարհը» թեմայով և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1990-ին Լ. Հախվերդյանը ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1996-ին՝ ակադեմիկոս:

1987 թվականից մինչև կենաց վախճանը՝ 2003 թ. փետրվարի 6-ը, Լ. Հախվերդյանը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Ծանրակշիռ է Լ. Հախվերդյանի գիտական վաստակը՝ ավելի քան 30 գիրք ու հարյուրավոր հոդվածներ գրականության, թատրոնի և լեզվի վերաբերյալ:

Իր անդրանիկ աշխատության մեջ՝ «Մեր օրերի հայ դրամատուրգիան», որը լույս տեսավ 1955 թվականին, Լ. Հախվերդյանը ուրվագծել է հետպատերազմյան հայ թատերագրության ամբողջական պատկերը:

Գիտնականի թատերագիտական հետաքրքրությունների առանցքում են եղել թե՛ հայ ռեժիսուրայի, թե՛ հայ դերասանական արվեստի հարցերը:

Հայ թատերագիտական մտքի պատմության մեջ նոր ու կարևոր հանգրվան էր Լ. Հախվերդյանի «Հայ թատրոնի պատմություն. 1901-1920» (1980) մենագրությունը, որն արժանացավ Հայաստանի պետական մրցանակի:

Այսօր էլ Լ. Հախվերդյանի թատերագիտական ուսումնասիրություններով կրթվում են երիտասարդ թատերագետները, դրանք հիմք են ծառայում թատերագիտական նորանոր հետազոտությունների համար:

Լ. Հախվերդյանը գրասենյակային գիտական չէր. նա սերտորեն կապված էր իր ժամանակի թատերաշխարհում ընթացող ստեղծագործական պրոցեսների հետ: Իր թատերախոսականներով, խորհուրդներով և առաջարկություններով թատերագետը մեծապես նպաստել է ժամանակակից թատերարվեստի առաջընթացին: Ինձ ապշեցնում են Հախվերդյան թատերական քննադատի հանդեպ հայ թատերարվեստի միջին ու ավագ սերնդի ներկայացուցիչների՝ ռեժիսորների ու դերասանների պատկառառնքն ու ակնածանքը, այն պաշտամունքը, որն այսօր կա Հայաստանի թատերական գործիչների միությունում և արտասահմանում, մասնավորապես Վրաստանում, Լիբանանում ստեղծագործող ռեժիսորների ու դերասանների շրջանում:

Թեև հայ գրականագիտական շրջանակներում լայն արձագանք ստացան «Իսահակյանի կյանքն ու գործը» (1974) աշխատությունը և «Պարույրը» խոհագրությունը (1981, 1997), որի համար Լ. Հախվերդյանը արժանացավ Հայաստանի գրողների միության Միքայել Նալբանդյանի անվան մրցանակին, սակայն Հախվերդյան գրականագետի պաշտամունքի առարկան նրա ողջ կյանքի ընթացքում մնաց Թունամյանի ստեղծագործությունը: «Արժեք ծնվել հենց միայն Թունամյան կարողալու և նրա մասին գրելու համար», - խոստովանել է նա: Իսկ ամեն ինչ սկսվել էր դեռևս մանկական տարիներին: Երբ դեռ գրել-կարդալ չգիտեր, հայրն ընթերցում էր Թունամյանի հեքիաթները, ինքը՝ լսում: Որդու ծննդյան 10-ամյակի օրը հոր նվերը դառնում է խիստ խորհրդանշական. հայրը որդուն նվիրում է «Հովհաննես Թունամյան. Գեղարվեստական երկեր» մեծադիր հատորը, որն այդ օրվանից դառնում է պատանու սեղանի գիրքը՝ լուսավորելով նրա հետագա գիտական ուղին, որն էլ զարմանալիորեն ավարտվեց «Թունամյանը և հայոց պատմական ճակատագիրը» աշխատությունով. գիտնականի «կարապի երգը» լույս տեսավ 2000 թվականի տարեմուտին:

Եվ պատահական չէ, որ Լ. Հախվերդյանը եղել է Թունամյանի ծննդյան 100-ամյակն անցկացնող կառավարական հոբելյանական հանձնաժողովի քարտուղարը, Իսահակյանի ծննդյան 100-ամյակն անցկացնող հոբելյանական հանձնաժողովի քարտուղարը, ինչպես նաև Թունամյանի և Կոմիտասի ծննդյան 125-ամյակն անցկացնող կառավարական հանձնաժողովի անդամ:

Հայրենիքը բարձր է գնահատել Հախվերդյանի վաստակը. 1972-ին նա արժանացել է ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

1987 թ. հոկտեմբերի 1-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Ջալալյանը, ով 34 տարի հմտորեն ղեկավարել էր Արվեստի ինստիտուտը, և ուն գործունեության հետ կապվեց ակադեմիական արվեստագիտության այդ բացառիկ ու միակ օջախի Ոսկեդարը, տարիքի բերումով իր դիմումի համաձայն ազատվեց զբաղեցրած պաշտոնից և իր փոխարեն առաջարկեց Լևոն Հախվերդյանի թեկնածությունը: Եվ չսխալվեց:

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում Լ. Հախվերդյանը ոչ միայն շարունակեց զարգացնել ավանդույթները, այլև այդ ժամը տարիներին կարողացավ պահպանել Արվեստի ինստիտուտը: «Բարեփոխումների» անվան տակ բզկտվում է Արվեստի ինստիտուտը: 1991թ. սեպտեմբերին «Հուշարձանների համահավաքի» բաժինն իր բոլոր աշխատակիցներով դուրս է բերվում Արվեստի ինստիտուտի կազմից և միացվում ՀՀ

ճախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի պահպանության և օգտագործման գլխավոր վարչության հուշարձանների ուսումնասիրման գիտաարտադրական արվեստանոցին, իսկ 1992 թ. մարտին վերացվում է Արվեստի ինստիտուտի կինոյի և հեռուստատեսության բաժինը. բաժնի աշխատակիցները տեղափոխվում են ՀՀ մշակույթի ճախարարության կազմում ստեղծված Ազգային ֆիլմադարան, որին էլ անհատույց համընկնում են բաժնի տեխնիկական սարքավորումները:

Շեշտակի կրճատվում է Արվեստի ինստիտուտի գիտական անձնակազմը. անկախության հետ սկիզբ առած արտագաղթի օրեցօր ահագնացող ալիքի հետ գիտնականների մի մասը հեռանում է հայրենիքից, մի մասն էլ, տեսնելով գիտնականի վարկանիշի սրընթաց անկումը հասարակության շրջանում և խուսափելով կիսաքաղց գոյության հեռանկարից, հեռանում է գիտությունից: Ինստիտուտում մնում են նվիրյալները, ովքեր չեն հաշտվել լարված շարունակում են արարել: Ու այդ դաժան ու անհեռանկար պայմաններում Արվեստի ինստիտուտը «հերոսաբար» շարունակում է իր գիտական գործունեությունը. հրատարակվում են արվեստագիտական արժեքավոր հետազոտություններ, պաշտպանվում են դոկտորական ատենախոսություններ, ստեղծվում է գիտական աստիճանաշնորհման Օ16 մասնագիտական խորհուրդը, ասպիրանտուրա են ընդունվում հեռանկարային երիտասարդ հետազոտողներ:

Հայրենիքի ծանր կացությունը, երկրին համակած մշակութային ու բարոյա-հոգեբանական խոր ճգնաժամը, օրեցօր ահագնացող արտագաղթն ու դրա հետևանքով Հայաստանի հայաթափումը, սակայն, «ի գորու չէին» ընկճելու ու կոտրելու Հախվերդյանին: Նա մնաց միշտ լավատես ու կատակասեր:

Խոսքս ուզում են ավարտել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 3-րդ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի՝ Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի (2-4 նոյեմբերի, 2004) նյութերի ժողովածուի առաջաբանում տեղ գտած հետևյալ խոսքերով, որոնք այսօր էլ մեզ համար կարող են նշանաբան և ուղեցույց դառնալ, որպեսզի մենք էլ չընկճվենք ու չկոտրվենք. «Բարության և Արդարության վերջնական հաղթանակի հավատով կյանքի տառապանքները հաղթահարելու կամքը նրա գործունեության տիրական նշանաբանն էր: Նա այն հազվագյուտ մարդկանցից էր, որ անձրևից հետո առաջացած պղտոր ջրափոսերում տեսնում էր նաև աստղաշատ երկնքի արտացոլանքը»:

ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ովքեր չեն սովորում պատմությունից, դատապարտված են այն կրկնել:

Ֆրիդրիխ Նիցշե

Մի՛ պատասխանիր ոչ մեկին, երբ զայրացած ես, ոչինչ մի՛ խոստացիր, երբ երջանիկ ես, որոշումներ մի՛ կայացրու, երբ տխուր ես:

Դալայ Լամա

Երբեք մի՛ ծիծաղիր ուրիշի անցյալի վրա, դու դեռ չգիտես քո ապագան:

Արաբական ասացվածք

Կյանքի ամենամեծ փառքը երբեք չընկնելը չէ, այլ երբ ամեն անգամ ընկնելուց հետո ոտքի եմք կանգնում:

Նելսոն Մանդելա

Ձեր ժամանակը սահմանափակ է, զուր մի՛ վատնեք այն՝ ապրելով ուրիշի կյանքով:

Սթիվ Ջոքս

Իմաստուն սկեսուրը կկարողանա կրակ վառել փոքրիկ կայծից իր որդու մարող ընտանեկան օջախում, բայց հիմար սկեսուրը կկարողանա համագցնել մույնիսկ սիրո կրակը:

Արևելյան իմաստություն

Եթե ուզում ես շարունակել քո երջանիկ կյանքը, ոչ մեկին մի՛ պատմիր քո երջանկության մասին:

Արաբական ասացվածք

Ամեն դժվարության կենտրոնում ընկած է հնարավորությունը:

Ալբերտ Էյնշտեյն

Ով ձեզ մոտ բամբասում է այլ մարդկանցից, վաղը նրանց մոտ կբամբասի ձեզանից:

Հասան ալ-Բասրի

Հաջողությունը վերջնական չէ, ծախսողունը ճակատագրական չէ. կարևորը շարունակելու քաջությունն է:

Ուիլսոն Զերչիլ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. ՀԱՅԻ ՈԳԻՆ

Ամհատներ կան, որոնք ապրում են և նշանավոր են միայն նրանով, որ մի բարձր պաշտոն ունեն կամ աստիճան: Առեք նրանցից այդ պաշտոնը կամ աստիճանը, կտեսնեք օխտը կորածի մինը: Մարդիկ էլ կան, որ առանց իշխանության էլ, թեկուզ նույնիսկ ծախորդության ու հալածանքի մեջ, միշտ երևում են իրենց ինքնուրույն կերպարանքով, ուժով ու շնորհքով: Եղպես են և մարդկային ցեղերը: Պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնուրույն իշխանություն, զենքի զոր ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հալվել են ժողովուրդների մեջ ու կորել: Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ: Իհարկե, ծանր է եղել միշտ էս մաքառումը և բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց, այնուամենայնիվ, նրանք չեն կորել ու կան: Եղ ժողովուրդներից մինն է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականորեն անկախ չի եղել գրեթե երբեք, որ իր գոյության տարիներից ավելի շատ կարող է կոտորածներ համարել, և սակայն էսօր էլ տակավին կա իր, լավ թե վատ, ազգային կյանքով ու կերպարանքով:

Գիտությունը, լուսավորությունը, մարդկային կյանքի պատմության շատ մուկ տեղերի հետ միասին, լույս կծգի և մեր անցկացած երկար ու դժար ճամփի վրա մինչև նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է

մեր ուժերից: Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու էսօրը:

Էսքան փորձություն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ալեկոծության քմահաճույքին անձնատուր: Եթե էդ դրությունը հասկանալի է խավար բազմության համար, ներելի չի ինտելիգենցիային, որ ինչքան էլ ընդհանուր առումով խորթ լինի էս ժողովրդին իր հոգով ու կենցաղով, այնուամենայնիվ իր մեջ պետք է ունենա և ունի մարդիկ, որոնք ապրում են էդ ժողովրդի կյանքն ու պատմությունը: Նրանք առաջ պետք է անցնեն, որոնք են, ցույց տան, թե որն է էս ժողովրդի ճանապարհը:

Մեզանում, հիրավի, ճանապարհներ կան որոշած, բայց դրանք էս կամ էն կուսակցությանն են կամ լրագրի: Ամեն ազգի մեջ կան և միշտ կլինեն ամեն տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցություններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջությունը:

Այո՛, լինում են դեպքեր, մի որևէ հոսանք ուժ է առնում ու ժամանակավոր էս կամ էն կողմը քաշում կյանքն ու մարդկանց ուշքը, բայց դրանք մոմենտներ են ամեն ժողովրդի կյանքի մեջ, որոնցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին, և նա դարձյալ կխոսի ու պատասխան կուզի, թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ր որոնեմք էլ



ոգին: Արդյոք Սասունի, Ջեթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերո՞ւն, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիք կամարների տա՞կ, ուր ծավալվում է «խորհուրդ խորին անհաս ու անսկիզբ», թե՞ դալար մարգերում ու խաչահանգիստ հովիտներում, ուր «լուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի թուն անուշ»: Արդյոք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» խոսողի երկնաշու պաղատանքների՞ մեջ, թե՞ «Վերք Յայաստանի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ:

Իհարկե, էս ամեն տեղերում, էս ամենի մեջ: Եվ ինչքան մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարոտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածության ու ավերածության...

Ո՞րն է հայ ժողովրդի ոգին, և ի՞նչ է ուզում նա:

1910 թ.



Հայ կինոաշխարհի արժանավոր զավակը

Մեր օրերի նշանավոր կինոդեմքերից է Հարություն Խաչատրյանը՝ կինոռեժիսոր, պրոդյուսեր, սցենարիստ: Այս տարի նա դառնում է յոթանասուն տարեկան: Բազմաթիվ հայ մեծերի օրրան չքնաղ Ջավախք աշխարհից է հորեյսար արվեստագետը, ծնվել է 1955 թ. հունվարի 9-ին Ախալքալաքում՝ Ռուբեն և Հայաստան Խաչատրյանների ընտանիքում: 1961 թ. ընդունվել, 1971 թ. ավարտել է տեղի Հովհաննես Թումանյանի անվան հանրակրթական դպրոցը: 1971-1972 թթ. ուսանել է Ախալքալաքի թիվ 13 մասնագիտական-տեխնիկական թուեջի էլեկտրոնային հաշվողական համակարգերի վերահսկման բաժնում, ստացել այդ ոլորտում վերահսկիչի որակավորում: Հետո աշխատել է «Հայէլեկտրաճախագիծ» ինստիտուտում: 1973-1975 թթ. ծառայել է բանակում:

Բայց այլ էր առաքելությունը, որը նա ստանձնում է 1977 թ.՝ ընդունվելով Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կինոռեժիսուրայի ֆակուլտետ: Ուսանողական տարիներին ստանում է Լենինյան կրթաթոշակ: Բարձրագույն ուսումնառությունն ավարտում է 1981 թ., չնայած դեռ 1979-ից աշխատում էր «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես ռեժիսորի և օպերատորի օգնական, ավելի ուշ՝ որպես ռեժիսոր: Կինոյի տիրույթ մուտքին նախապատրաստվում է մեծանուն Յուրի Երզնկյանի կուրսում:

Հայ կինոյի գրանցամատյանում անդրանիկ գրառումը լինում է 1981 թ.՝ «Մեր թաղի ծայերը» 8-րոպեանոց ֆիլմը (վավերագրական ֆիլմերի երևան ստուդիա), որին հաջորդում են բազմաթիվ այլ էջեր: Շնորհիվ շատ մվիրյալի անդուլ աշխատանքի պտուղներն են «Մեր թաղի ծայերը» (1981 թ.), «Հյուրընկալվելով հրամանատարին» (1985 թ.), «Մի եղելության խորհրդակ» (1985 թ.), «Երեք ռաունդ Ենգիբարյանի կյանքից» (1986 թ.), «Կոմի» (1987 թ.), «Սպիտակ քաղաք» (1988 թ.), «Քամին ունայնության» (1989 թ.), «Վերադարձ ավետյաց երկիր» (1991 թ.), «Վերջին կայարանը» (1994 թ.), «Վավերագրողը» (2003 թ.), «Պոետի վերադարձը» (2005 թ.), «Սահման» (2009 թ.), «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ» (2012 թ.), «Փակուղի» (2016 թ.), «Նկարչի երեք գերեզմանները» (2023 թ.) ֆիլմերը:

Ստեղծած արժեքավոր պաշարով արվեստագետը մուտք է գործել նաև համաշխարհային կինոասպարեզ, մասնակիցը եղել բազմաթիվ միջազգային հեղինակավոր կինոփառատոների, վերադարձել հաղթական դափնիներով՝ դառնալով հայ և համաշխարհային կինոյի սպասված ու սիրված այրերից մեկը: Հարություն Խաչատրյանը ոչ միայն ստեղծում է, այլ նաև կազմակերպում, ուղղություն, ընթացք տալիս.

1991 թ. հիմնադրում է «Դեբյուտ» կինոփառատոնը, 1993-1994 թթ. աշխատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում՝ որպես մշակույթի և գիտության վարչության պետ: Նրա կազմակերպական աշխատանքի մեծակշիռ նյութեղենացումը հայության մայր կինոմիջոցառումն է «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային կինոփառատոնը՝ կինոյի տոն ու տոնախմբություն ամեն մի կինոսերի համար: 2004 թ. արվեստարար գործընկերների հետ նա հիմնադրում է այս փառատոնը, որը 2009 թ. Հոլիվուդի Օտարերկրյա մամուլի ասոցիացիայի կողմից արժանանում է «Ոսկե գլոբուս»-ի, իսկ 2010-ին Կինոյի, հեռուստատեսության և սպորտի միջազգային ֆեդերացիայի կողմից ստանում է «FICTS Plate D'Honneur 2010» մրցանակը: Վաստակավոր կինոգործիչը, այս կինոտոնի համահիմնադիրն ու համակայացնողը լինելուց բացի, դառնում է նաև նրա բազմամյա ղեկավար՝ գլխավոր տնօրենը՝ 2004-ից, այսինքն՝ հիմնադրման թվականից մինչև 2018 թ.: 2016-2017 թթ. ղեկավարում է Հայկական ազգային կինոակադեմիան: 2017 թ. ընտրվում է Հայաստանի կինոգործիչների միության նախագահ:

Կինոյի եռանդուն մվիրյալի գործին տրվել է նաև պաշտոնական գնահատական. «Վավերագրողը» ֆիլմի համար 2003 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի, 2006 թ. ստացել է ՀՀ վաստակավոր արտիստի կոչում: Նույն թվականից Եվրոպական կինոակադեմիայի անդամ է, 2007 թ. ստացել է Նիդեռլանդների «Արքայազն Կլաուս» մրցանակը, 2008 թ. Ֆրանսիայի մշակույթի և հաղորդակցության նախարարության «Շևալյե» արվեստի և գրականության շքանշանը: Նույն 2008-ին նրան շնորհվել է «Մովսես Խորենացի» մեդալ: 2010 թ. արժանացել է ԱՄՆ-ի Անկախ կինոգործիչների դաշինքի Ռոբ Նիլսոնի մրցանակին և Իտալիայի «Դարկո Բրատինա» հեղինակավոր մրցանակին: «Սահման» ֆիլմի համար 2010 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին: 2013 թ. Հարություն Խաչատրյանին շնորհվել է ՀՀ ժողովրդական արտիստի կոչում:

Արդի հայ կինոյի վարպետներից մեկը, որ թեպետ ապրած տարիներով ամբողջացրել է 70-ը, այնուհանդերձ երիտասարդ է հոգով, մտքով ու կամքով և պատրաստ մոր հաղթահարումների, մոր վերելքների, մոր խոյանքների՝ հայ և համաշխարհային կինոյին տալով նորանոր արժեքներ: Հարություն Խաչատրյանի՝ մինչ այժմ ապրած տարիները եղել են մեծաեռանդ ու մեծարժեք կերտումներով շաղախված տարիներ: Վստահաբար ու անկասկած աշխատել են լինելու և ընդառաջ եկող տարիները, հետախուսել էլ փայլելու է խաչատրյանական տաղանդը, կինոսերը էլի վայելելու է այդ տաղանդի ուժն ու հմայքը:

Երկար կյանք մատուցողին, մշտադաշարունակականությունը նրա ավյունին, հաջող իրականացումը նրա բոլոր նպատակներին:

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ (Հրաչյա Արմենյան)
Բանասիրական գիտությունների թեկնածու



Կ. Զատուկյան. Բաքվում ԼՂՀ նախկին ղեկավարների «շուռ» դատավարությունը վրեժխնդրության ակտ է

Բաքվում սկսվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախկին ղեկավարների և նրանց մի քանի հայրենակիցների «շուռ» դատավարությունը, որոնք գերի էին ընկել 2023 թվականին՝ Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքը գրավելու նպատակով ադրբեջանական «բլիցկրիգի» ժամանակ: Այս մասին իր հայտարարության մեջ նշել է Ռուսաստանի Պետության ՄԴՀ և հայրենակիցների հետ կապերի համընթաց ժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուկյանը:

«Սա անձնական վրեժխնդրություն է Ադրբեջանի նախագահի Իլհամ Ալիևի կողմից, որը ոչ մի դեպքում ունակ չէ գերծ մնալու դրանից: Մինչև 2024 թվականի ապրիլի 22-ը բազմաթիվ 1389 քրեական գործով «պատերազմական» հանցագործությունների մեջ մեղադրվողների շարքում հայտնվել են իմ ընկերները՝ ԼՂՀ նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը: Եվ մյուսները, այդ թվում՝ ԼՂՀ նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ով հրաժարվեց Ռուսաստանի քաղաքացիությունից՝ կիսելու համար Լեռնային Ղարաբաղի հայերի ճակատագիրը:

Լեռնային Ղարաբաղի ողջ հայ բնակչությունը՝ ավելի քան 100 հազար մարդ, կամայք, ծերեր և երեխաներ, լքել են իրենց տները, եկեղեցիներն ու պապեմական գերեզմանները և փախել Հայաստան Ադրբեջանում դրախտային կյանքի հեռանկարից: Ղարաբաղից Հայաստան հայերի փախուստը 24 ժամ հեռարձակվում էր թուրքական հեռուստալիքներով և տեսանելի էր տիեզերքից: Եվ դատելով նրանից, թե ինչ է կատարվում այսօր Բաքվում, փախստականները միանգամայն իրավացի էին: Սա 21-րդ դարի խայտառակությունն է՝ կրկնելով, թեկուզ ավելի փոքր ու նվազ արյունալի մասշտաբով, 20-րդ դարի սկզբի հայերի կոտորածի սարսափները:

Այն ամբողջ ընթացքում, երբ գերեվարված Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Ռուբեն Վարդանյանը և մյուսները խոշտանգվում էին Բաքվի բանտերում, Հայաստանի ղեկավարը մատը մատին չտվեց՝ նրանց ազատելու համար: Ցավոք սրտի, Լեռնային Ղարաբաղի և նրա առաջնորդների ողբերգության պատմության ստվերն ընկնում է Ռուսաստանում մեզ վրա՝ խաբված լինելով իր խաղաղապահ գործողությամբ: Ահա թե ինչից է այսօր օգտվում պարոն Փաշինյանը: Ամոթ է:

Ներկայումս ռուս-հայկական «Լազարյան ակումբի» խորհուրդը պատրաստում է մեր հայտարարությունը Բաքվի դատավարության վերաբերյալ», - ընդգծել է Կոնստանտին Զատուկյանը:

168.am



Զանգեք այնուրակայիններին

Տիեզերքում «բանական եղբայրների» փնտրության խնդրի ավանդական մոտեցումն է. լսել ռադիոազդանշաններ և հուսալ, որ բնական ազդանշանների բազմության մեջ մենք երբեք կկարողանանք հայտնաբերել արհեստականները: Դրանք կլինեն կամ բանակցություններ՝ արդեն շփում հաստատած այնուրակային քաղաքակրթությունների հետ, կամ էլ «բոլորին, բոլորին» արծազանքելու կոչեր: Կարող ենք ժամանակ առ ժամանակ ինքներս ուղարկել այդպիսի ազդանշաններ:

Անգլիական գիտահամալսարանի «BBC Science Focus» ամսագրում վերջերս տպագրված հոդվածի (որը, իր հերթին, հիմնված է «Թագավորական աստղագիտական ընկերության ամենամայա նշումներ»-ում հրապարակված ընդարձակ աշխատանքի վրա) հեղինակներն առաջարկում են խնդրին մոտենալ մյուս ծայրից: Այն հրապարակել են Զոդիակյան օվկիանոսի Մավրիկիա կղզու համալսարանի երկու ռադիոաստղագետներ և նրանց գործընկերները Մանչեստրի (Մեծ Բրիտանիա) համալսարանից: Ուզում ենք մենք, թե ոչ, բայց այն պահից, երբ հայտնագործեցին ռադիոն, իսկ հետո նաև՝ հեռուստատեսությունը, մեր մոլորակը սկսեց ավելի ու ավելի վառ փայլել ռադիոտիրություն: Իսկ վերջին տասնամյակներում ակտիվորեն զարգանում է բջջային հեռախոսակապը, որն ընդգրկում է գրեթե ամբողջ երկրագունդը: 2021 թ. աշխարհում կար գրանցված շուրջ 15 միլիարդ բջջային հեռախոս, իսկ մինչև 2025 թ. դրանց թիվը կգերազանցի 18 միլիարդը:

Գոմե մեկ հեռախոս ունի մարդկության 91,2 %-ը, շատերն ունեն երկուսը, երեքը: Հեռախոսային կայանները, որոնք տեղադրված են հատուկ աշտարակների կամ ուղղակի տանիքի վրա, ճառագայթում են շատ ավելի ուժեղ, քան առանձին հեռախոսը. այդպիսի կայանի հզորությունը մի քանի հարյուր վատտ է: Հոդվածի հեղինակները հիմնվում են այն ենթադրության վրա, որ ուրիշ աշխարհներում ռադիոաստղագիտությունն իր զգայնությամբ գերազանցել է երկրայինը, և նրա տերերը, եթե չեն կարող ակամջ ղեկ մեր խոսակցություններին, ապա գոմե կարող են հետաքրքրվել այդ տիրույթներում Արեգակնային համակարգի պայծառության աճով: Ռադիոաստղագետները ենթադրել են, որ իրենց արտերկրային գործընկերները, որոնք հասել են մույն կամ ավելի բարձր մակարդակի, քան երկրայինները, կարող են լինել մեզ համեմատաբար մոտ երեք աստղերի շուրջը. Լալանդ 21185 Մեծ արջի համաստեղությունում (մինչև այդ աստղը 8 լուսային տարի է), Օծակրի համաստեղությունում Բառնարդի աստղը (մոտավորապես 6 լուսային տարի), Կենտավրոս A Ալֆա համակարգի C աստղը (մոտավորապես 4 լուսային տարի): Բջջային կապի ակցիոներն այնպես են պատրաստված, որ ավիները սփռում են գլխավորապես իրենց շուրջը, այլ ոչ թե վերև՝ դեպի երկինք, հետևաբար՝ արտերկրային դիտորդը կնկատի դրանց ճառագայթումը միայն այն դեպքում, երբ երկրի պտույտի հետևանքով ճառագայթումն ուղղված կլինի նրա կողմը: Երկրի բազային կայանների ընդհանուր հզորությունը գնահատ-



վում է շուրջ 7,2 գիգավատտ: Այն առավելագույնն է Արևմտյան Եվրոպայում, փոքր-ինչ հետ են մնում Հյուսիսային Ամերիկան և Արևելյան Ասիան: Արդեն ոչ քիչ ներդրում ունեն Աֆրիկայի զարգացող երկրները, որտեղ բջջային հեռուստակապն արագորեն փոխարինել է այնտեղ համարյա գոյություն չունեցող լարային կապին: Ճիշտ է, հեռախոսային ակցիոների գերհեռավոր ընդունումը խոչընդոտում է Արեգակը՝ հատկապես բարձր ակտիվության շրջանում, բայց օգտագործելով այսպես կոչված ռադիոհոսերֆերաչափությունը (դիտումներ տարբեր մայրցամաքներից կամ մույնիսկ մոլորակի ուղեծրի տարբեր կետերից)՝ այնուրակայինները սկզբունքորեն կարող են մեզ նկատել: Իհարկե, եթե նրանք գոյություն ունեն, եթե օժտված են անհրաժեշտ տեխնիկայով, և եթե դա նրանց հետաքրքրում է:

«Գիտության աշխարհում», 2024 թ., N 3

Ռե-շագրավ աշխարհություն



Վերջերս Թբիլիսիում «Վրաստանի Հայ Համայնք» հասարակական կազմակերպության ջանքերով անցկերեն և վրացերեն լեզուներով լույս է տեսել «Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությունը հայերի նկատմամբ 1918-2023 թթ.» գիրքը, որը համառոտառիչ ուսումնասիրություն է՝ նվիրված ավելի քան մեկդարյա ողբերգական իրադարձություններին և հանցագործություններին: Գիրքը բաժանված է վեց մասի, սկսած 1918 թվականի արյունալի իրադարձություններից, որոնք հայտնի են որպես «Բաքվի ջարդեր», և ընդգրկում է առանցքային դրվագներ, ներառյալ.

- 1919–1920 թթ. Շուշիում հայերի ջարդերը
- 1988–1990 թվականներին Սումգայիթում, Բաքվում և Մարաղայում հայերի ջարդերն ու տեղահանությունները
- 2016 թվականի ապրիլյան բառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի ռազմական հանցագործությունները
- 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո կատարված հանցագործությունները
- 2023 թվականին արցախցիների բռնի տեղահանությունը, Արցախի էթնիկ զտումը:

Գիրքը ոչ միայն իրադարձությունների տարեգրություն է, այլև ցեղասպանության, ջարդերի, բռնի տեղահանումների, մշակութային ժառանգության ոչնչացման և պատմական փաստերի սխտեմատիկ ժխտման միջոցով հայերին ոչնչացնելուն ուղղված ցեղասպանական քաղաքականության մանրամասն ուսումնասիրություն: Հատուկ ուշադրություն է դարձվում Շուշիի, Սումգայիթի, Բաքվի ողբերգու-

թյուններին և Արցախի վերջին իրադարձություններին, երբ հայ բնակչությունը ստիպված եղավ լքել իր պապենական հողերը:

Հրատարակումը հնարավոր է դարձել Վրաստանի ինչպես հայ, այնպես էլ ազգությամբ վրացի քաղաքացիների ֆինանսական և տեխնիկական աջակցության շնորհիվ:

Գիրքը թարգմանվել է անգլերեն՝ հասանելի դարձնելով այն միջազգային լայն լսարանին: Երկու հրատարակություններն էլ՝ վրացերեն և անգլերեն, ստացել են առանձին շտրիխ կոդեր Վրաստանի Ազգային գրադարանից:

Գրքի անգլերեն տարբերակն արդեն փոխանցվել է Վրաստանում տարբեր երկրների ավելի քան 40 հավատարմագրված դեսպանություններին և ներկայացուցչություններին, ինչը նպաստում է ողբերգական իրադարձությունների մասին միջազգային իրազեկվածության բարձրացմանը: Նախատեսվում է նաև ուղարկել այն երկրների դեսպանատներ, որոնց ներկայացուցչությունները գտնվում են այլ երկրներում: Վրացերեն տարբերակը փոխանցվել է Վրաստանի ավելի քան 20 բուհերի գրադարաններ, իսկ ապագայում նախատեսվում է ֆոնդերը համալրել անգլերեն թարգմանությամբ:

Վրացահայ համայնքի առաջիկա ծրագրերը ներառում են գրքի փոխանցումը պետական հաստատություններին, Վրաստանի հիմնական կուսակցությունների կենտրոնական գրասենյակներին, հասարակական կազմակերպություններին, Վրաստանում միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններին, ինչպես նաև ԶԼՄ-ների խմբագրություններին: Սա կօգնի էլ ավելի մեծ ուշադրություն հրավիրել պատմական արդարության պահպանման և նման ողբերգությունների կրկնությունը կանխելու հարցերի վրա:

Գիրքը ոչ միայն հարգանքի տուրք է գոհերին, այլ նաև կոչ է միջազգային համրությանը՝ գիտակցելու ցեղասպանության կրկնվող գործողությունների լրջությունը և քայլեր ձեռնարկելու դրանք ապագայում կանխելու համար:

aravot.am (27.12.2024թ.)

ԹԵՎԱՎՈՐ ԴԱՐՁԱԾ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լինե՞լ, թե՞ չլինե՞լ

Շեքսպիրի «Համլետ» ողբերգության մեջ Համլետի մեղախոսությունից է: Օգտագործվում է որպես հարց՝ նոր ու վճռական քայլի դիմելուց առաջ:

Լուկուլիոսյան ճաշ

Նշանակում է ճոխ, շքեղ խնջույք: Առաջացել է հռոմեացի գորավար Լուկուլիոսի (մոտ 106-56 մ.թ.ա.) անունից, որն ունեցել է անհամար հարստություն և աչքի է ընկել իր ամենօրյա շքեղ ճաշկերույթներով:

Կարապի երգ

Օգտագործվում է որևէ մեկի կատարած վերջին գործը, տաղանդի վերջին բոցկտումը բնութագրելու ժամանակ: Իբր կարապները երգում են միայն մեկ անգամ, այն էլ՝ մահից առաջ: Առաջ է եկել Եզոպոսի առակից. «Ասում են՝ կարապ երգում է մահից առաջ»:

Կոկորդիլոսի արցունքներ

Օգտագործվում է կեղծավորությունն ու երկերեսամիությունը բնութագրելիս: Առաջացել է այն հավատալիքից, թե իբր կոկորդիլոսն իր գոլիմ խժեռուց առաջ աչքերից արցունքներ է թափում:

Կռիվ հողմաղացների դեմ

Անիմաստ պայքար, որ մղվում է երևակայական թշնամու դեմ: Ծագել է Սերվանտեսի «Դոն Գիշոտ» վեպից, որտեղ պատկերվում է նրա կռիվը հողմաղացների դեմ:

Կրակի վրա յուղ լցնել

Հռոմեացի բանաստեղծ Հորացիոսի (65-8 մ.թ.ա.) արտահայտությունն է: Օգտագործվում է, երբ որևէ երևույթ ցանկանում են դիտավորյալ սրել, բորբոքել, ստեղծել տհաճ իրավիճակ:

Կրակից շագանակներ հանել

Առաջացել է Լաֆոնտենի (1621-1695) «Կապիկն ու կատուն» առակից: Կատուն, թաթերը վառելով, կրակից հանում է շագանակը, իսկ կապիկն այն վառելում է: Արտահայտության իմաստն է՝ չարչարվել ուրիշի համար:

Հանձնիքային երդում

Հանձնիքալը (247-183 մ.թ.ա.) 10 տարեկան էր, երբ հոր թելադրանքով երդվում է ամբողջ կյանքում լինել Հռոմի թշնամի և հավատարիմ մնալ այդ երդմանը: Փոխաբերական իմաստով

մշանակում է հաստատ մնալ մի որևէ սկզբունքի:

Հերոստրատյան հոշակ

Հույն Հերոստրատն ամեն կերպ ցանկանում էր հոշակվել պատմության մեջ: 356թ.(մ.թ.ա.) նա հրկիզեց Արտեմիդայի տաճարը, որով և մտավ պատմության մեջ: Նշանակում է խայտառակ, տխուր, շատ վատ հոշակ:

Չայն բարբառո հանապատի

Ըստ լեգենդի՝ Եղիա մարգարեն ճանապարհ պիտի հարթեր հրեաների համար դեպի Աստված, և նրա կանչով լեռները պիտի իջնեին, ու հարթ ճամփա պիտի բացվեր: Բայց նրա ծայրը անպատասխան է մնում անապատում: Օգտագործվում է որպես անպատասխան կոչ, անհետևանք նախազգուշացում, իզուր թափած ջանք:

Մավրն իր գործը արեց, մավրը կարող է գնալ

Առաջացել է Շիլլերի «Ֆիեսկոյի դավադրությունը Վենետիկում» ողբերգությունից (1783): Օգտագործվում է, երբ ցանկանում են նշել, որ գործը կատարված է, ամեն ինչ՝ վերջացած:

Յոթերորդ երկինք

Օգտագործվում է երջանկություն, բարձրագույն երանություն արտահայտելու ժամանակ: Արիստոտելը (384-322 մ.թ.ա.) կարծում էր, որ երկնային տարածությունը կառուցված է յոթ մասից: Յոթերորդ մասում, ըստ նրա կարծիքի, եղել է երկնային թագավորությունը, որտեղ իշխել է միմիայն երջանկությունը:

Ոսկեդար

Փոխաբերական իմաստով հասկացվում է երջանիկ ժամանակաշրջան, ապահովված կյանք, երանություն, ծաղկուն ժամանակ: Արտահայտությունը պատկանում է հույն բանաստեղծ Հեսիոդոսին:

Օ՜, ժամանակներ, օ՜, բարբեր

Ցիցերոնի արտահայտությունն է: Օգտագործվում է որևէ երևույթից դժգոհ լինելու ժամանակ:

Պլատոնական սեր

Նշանակում է մաքուր, մարմնական ձգտումներից հեռու, իդեալական սեր, ինչպես հասկանում էր սերը հույն փիլիսոփա Պլատոնը:

Լևոն Աղասիի ԹԱՎԱԴՅԱՆ



ՀՀ ԳԱԱ նախագահությունը խոր վշտով տեղեկացնում է, որ ս/թ. հունվարի 7-ին 73 տարեկան հասակում կյանքից հեռացել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լևոն Աղասիի Թավադյանը:

Ակադեմիկոս Թավադյանի գիտական գործունեությունը նվիրված է քիմիական կինետիկա, ազատառիկալային ռեակցիաներ, հեղուկաֆազ օքսիդացման ռեակցիաների կատալիզ և ֆոտոկատալիզ, հակաօքսիդիչ ազդեցության քիմիական մեխանիզմ, բազմափուլ քիմիական ռեակցիաների թվային մոդելավորում ուղղություններին: Նրա կողմից ստեղծվել է «Բազմափուլ քիմիական ռեակցիաների թվային արժեքային վերլուծություն» նոր գիտական ուղղությունը: Նա հեղինակն է «Բազմակենտրոն շղթայական պրոցեսների ընտրողական ինհիբացում» ԽՍՀՄ գիտական հայտնագործության: Լևոն Թավադյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատության, 3 մենագրության, որից երկուսը տպագրվել է ԱՄՆ-ում:

Լևոն Թավադյանը ծնվել է 1951 թվականի հունիսի 9-ին Երևանում: 1973 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1974 թվականին Մոսկվայում ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, որտեղ 1978 թվականին ստացել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նույն տարում Երևանում աշխատանքի է անցել Հայկական ԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: 1980-1981 թվականներին որպես հրավիրված հետազոտող աշխատել է Յուրգարիայի ԳԱ քիմիայի կենտրոնական ինստիտուտի միջազգային լաբորատորիայում: 1987 թվականին Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, ստացել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1985-2006 թվականներին աշխատել է որպես ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն և միաժամանակ ղեկավարել լաբորատորիա, որը ստեղծվել էր ինստիտուտի կոնդենսաց-

ված միջավայրում ազատառիկալային ռեակցիաների՝ նոր գիտական ուղղության զարգացման նպատակով: 2006-2019 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ Նախագահի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն: 1990 թվականից ակտիվորեն մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիտության և կրթության զարգացմանը նվիրված ծրագրերին՝ մեծ ներդրում ունենալով Ստեփանակերտում քիմիական էկոլոգիայի լաբորատորիայի հիմնադրման գործում: Լևոն Թավադյանը դասավանդել է Երևանի պետական համալսարանի քիմիայի և կենսաբանության ֆակուլտետներում, Հայ-ռուսական (Սլավոնական), Հայկական պետական մանկավարժական համալսարաններում:

Լևոն Թավադյանը եղել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի բնագիտության խորհրդի նախագահ, ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի անդամ, քիմիա-կենսաբանության ենթահանձնաժողովի նախագահ, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հանձնաժողովի անդամ, Ամերիկյան քիմիական ընկերության, Մոսկվայի պետական համալսարանի և ՌԴ գիտությունների ակադեմիայի Սեմյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի համատեղ գիտակրթական կենտրոնի գիտխորհրդի անդամ:

2011 թվականին Լևոն Թավադյանը ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, 2014 թվականին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 2011 թվականից՝ ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

2014 թվականից եղել է «Mediterranean journal of chemistry», 2015 թվականից՝ «Горение и взрыв», 2016 թվականից՝ «Вода и экология» ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ:

2011 թվականին Լևոն Թավադյանին շնորհվել է ՀՀ գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալ», «Ակադեմիկոս Ն. Մ. Էմանուելի հիշատակի» շքանշան, 2012 թվականին դարձել է ՌԴ գիտությունների ակադեմիայի և Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մրցույթի դափնեկիր: 2013 թվականին պարգևատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» մեդալով, 2014 թվականին նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը ցավակցում է Լևոն Թավադյանի ընտանիքին, հարազատներին, ընկերներին և գործընկերներին: Ակադեմիկոս Թավադյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում, իսկ նրա գիտական ժառանգությունը կուղղորդի սերունդներին:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՅՈՎԱԿԻՄՅԱՆ
խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ


Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 29.01.2025 թ.:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում:

ԴԵՅԼ ՔԱՐՆԵԳԻ Ինչպես ձեռք բերել բարեկամներ և ազդել մարդկանց վրա



Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մարդկային հարաբերությունների բնագավառի ամերիկյան հայտնի մասնագետ, հոգեբան և գրող Դեյլ Քարնեգիի (1888-1955) «Ինչպես ձեռք բերել բարեկամներ և ազդել մարդկանց վրա» գրքից մեջբերումներ, որոնք 90 տարի անց էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Վեց կանոն, որոնց կատարումը թույլ է տալիս դուր գալ մարդկանց

1. Անկեղծորեն հետաքրքրվեք ուրիշներով:
2. Ժպտացե՛ք:
3. Հիշե՛ք, որ մարդու ամուսն իր համար ամենադժվարն է և ամենակարևոր բառն է:
4. Եղե՛ք լավ ունկնդիր: Խրախուսե՛ք ուրիշներին՝ խոսելու իրենց մասին:
5. Խոսե՛ք այն մասին, ինչը հետաքրքրում է ձեր զրուցակցին:
6. Ներշնչե՛ք ձեր զրուցակցին իր նշանակալիության գիտակցությունը և արե՛ք անկեղծորեն:

Տասներկու կանոն, որոնց կատարումը թույլ է տալիս մարդկանց հակել ձեր տեսակետին

1. Վեճում հաղթելու միակ միջոցը նրանից խուսափելն է:
2. Հարգանքով վերաբերվե՛ք ձեր զրուցակցի կարծիքին:
3. Եթե իրավացի չե՛ք, ընդունե՛ք արագ և վճռականորեն:
4. Ամենասակզբից հավատարիմ մնացե՛ք բարեկամական տոնին:
5. Ստիպե՛ք ձեր զրուցակցին անմիջապես պատասխանել «այո»:
6. Թող ավելի շատ ձեր զրուցակցից խոսի:
7. Թող ձեր զրուցակցից կարծի, որ տվյալ միտքը պատկանում է իրեն:
8. Անկեղծորեն ջանացե՛ք իրերին նայել ձեր զրուցակցի տեսակետից:
9. Կարեկցանքով վերաբերվե՛ք ուրիշների մտքերին և ցանկություններին:
10. Կո՛չ արե՛ք ավելի ազնիվ մղումների:
11. Թատերականացրե՛ք ձեր գաղափարները, մատուցե՛ք տպավորիչ:
12. Մարտահրավեր նետե՛ք, դիպե՛ք զգայուն թելերին:

Ինը կանոն, որոնց կատարումը թույլ է տալիս ազդել մարդկանց վրա՝ նրանց չնեղացնելով և վիրավորանքի զգացում չառաջացնելով

1. Սկսե՛ք զրուցակցի արժանիքները գովելուց և անկեղծորեն գնահատելուց:
2. Ուրիշների սխալները ցույց տվե՛ք ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ձևով:
3. Նախ խոսե՛ք սեփական սխալների մասին, իսկ հետո արդեն քննադատե՛ք զրուցակցին:
4. Զրուցակցին հարցեր տվե՛ք նրան ինչ-որ բան հրամայելու փոխարեն:
5. Մարդկանց հնարավորությունն տվե՛ք փրկելու իրենց հեղինակությունը:
6. Խրախուսե՛ք մարդկանց ամենափոքր հաջողությունները և նկատե՛ք նրանց յուրաքանչ-յուր նվաճում: Եղե՛ք «անկեղծ ձեր գնահատականում և շնայլ՝ գովեստում»:
7. Մարդկանց համար բարի համբավ ստեղծե՛ք, որը նրանք կջանան արդարացնել:
8. Դիմե՛ք խրախուսանքի: Այնպիսի տպավորություն ստեղծե՛ք, որ սխալը, որ դուք ցանկանում եք ուղղված տեսնել, հեշտ ուղղելի է: Այնպես արե՛ք, որ այն, ինչին դրդում եք մարդկանց, նրանց դժվար չթվա:
9. Հասե՛ք այն բանին, որ մարդիկ ուրախությամբ անեն այն, ինչ դուք եք առաջարկում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ԴՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ծառայողագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

- 1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.
- 2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.
- 3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն երեք հրապարակում ՍԳՀ-ում կամ մեկ մենագրություն.
- 4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով առնվազն երկուսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պատկանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
- բ) ինքնակենսագրություն,
- գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
- դ) լուսանկար (2 հատ),
- ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ մույնականացման քարտի պատճենները,
- զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,
- ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,
- թ) բնութագիր վերջին աշխատավայրից,
- ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-56-32-54:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ